

2. Գիրգ

Բազումը են որ յաշ մարդկան անմեղք
երկին, այլ ի գործ Աստուծոյ անպիտան,
գիրգը, յիմարը, ցնորեալ, անտէր, ապուշը
(Եղիշ. Կանոն. էջ 368):

Մովորարար գիրգը կը նշանակէ «գիրուկ»,
փափուկ մեծցած, պարզաբան», բայց հոս
գէպի յոռին զարգացած առումով մը՝ եղած
է «ոյր, դատարկապորտ»:

3. Խանձոց

Տայ զինքն ի խանձ կերակրոյ, զի
միանգամայն իցէ ինքն ծով և տեղի և
խանձոց և կերակուր և ձկանցն որսորդ
(Եղիշ. տիւր. 335):

Մովն աշխարհս է, ուռկանն քարոզու-
թիւն Տեառն, ծագք ուռկանին չորք աւե-
տաբանք, ուռկանաւորք երկրտաաան ա-
ռաքեալըն, որսը ձկանցն ամենայն ազգը
հեթանոսաց, իսկ խանձոցն ի միջին՝ մար-
մին և արիւն Տեառն մերոյ (անգ՝ էջ 338):

Խանձոց բառը չունի ՆՋԻ. իսկ ԱԲ կը
մեկնէ «կարթ»։ այս իմաստը թէ և յարմար
է առաջին վկայութեան մէջ, բայց թուի
թէ անյարմար է երկրորդին, ուր աւելի
պատշաճ է հասկնալ պարզապէս «խայծ»,
կարթին անցուած կերը»:

4. Եւտոնդադէմ

Եւ ունի ցանկ անխրամ, ուր ոչ Եւս
և ոչ օձն կարասցէ սողել մտանեւ և ոչ
տալ զյետտ ընդդէմ խրատն և ոչ մերկանալ
զհայրենի փառան (Եղիշ. ննջ. 357):

Այլուր ունինք յետս բողոյեմ (իրը մակ-
բայ) «ետ ետ», բայց հոս զուտ ամական
դարձած է «հակառակ, ներհակ» նշանա-
կութեամբ:

5. Սարսառել

Է դարձեալ այլ ախտ, զոր կողացա-
ւութիւն կոչեն և թիկնացաւութիւն, և յայլ
օգից ոտից, ձեռաց, ողաց, կարկամելով

սարսառելով և զողալով բերէ զնմանութիւն
դիւահարի (Եղիշ. Կանոն. էջ 364):

Անշուշտ սարսախ «զողալ» բառն է և
եթէ ձեռագրական կամ տպագրական սխալ
մը չէ, շատ կարեւոր է իր ձեռով՝ իրր
պարզ կրկնաւոր մը ստա արժատէն:

(Շարունակելի)

Հ. ԱՍՏԻՍԵԱՆ

Գ Ր Ա Կ Ա Ն

Ա. Բ. Մ. Ի. Բ. Մ. Բ. *

□ □ □

Մեղքնակոծ ծովու փարոս, մինչ ահեղ
Մըրրիկներու աշոյշս, անդեկ անձնատուր
Հայ միտքն ի դուր կը մարտնչէր խելայեղ...

Ժպիտան եղար դու, երկընթին մեզ ցաթած
Հոծ խնարանի ըստրուկ, մոլի դարերու
Յոյսի հրեշտակ, խրախոյս ցեղիդ թողըքուած:

Ջահ հայ մըտքին դու նոր Մեսրոպ, զարմին հայ
Սիրտս ուխտանուէր յուշիդ, խոհիդ արդ յառած
Խօսքի մի լուր տեսլանդ առջեւ. կը զոփայ:

Հայէ ցեղիդ. հալածական դուժ բախտէն
Լոյս հորիզոն ցոյց տըւող աշդ երկընթիւր.
Ըրէ՛ որ մեզ ճեղք մը բացուի երկընթին:

Յիշատակդ հոս, յաւերժ անեղծ, կը հրսկէ
Մարմար ու հող կը շըշընջեն դեռ տըխուր
Անցաւ հանճար մ'առողջ եւ հեզ սուրբ մ'աւելէ:

Վեհագն հոգի, ցաւէն, սէրէն ճըմլուած
Սըրտիս նայէ՛, խօսէ՛ ինձի իմաստուն
Տօւր վեհ պատգամդ, ահա՛ հոգիս երկիւղած

Քու լուսեղէն ձեռքերուդ մէջ կը զընեմ.
Ո՛վ պիտի գայ, քեզ պէս փըրկիչ քե՛զ օն
Կերտե՛լ տաճարն ապագային լուսամեծ...

-X-

* Երախտագէտ Մ. Ռաֆայելեան օտնի մը ջերմ ար-
տայաբուժիչը կը պատկերաւոր այս քերթուածին մէջ,
որ Հիմադրիս տարեկան Յիշատակին առթիւ հասած էր
Հոսովն. չկրցանք ներկայացնել զայն նախընթաց թի-
ւով, վասն զի արդէն լոյս տեսած էր (Մ. Խ.):